

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԽԱ ԿԱՐ ՈՒՆ ԲՊԹԱՅՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԲ Լ ՈՒՂՂՂՂ ԱՌ  
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Չկապիրներն ետ չեն դարձաւր,  
ԱՐՅՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                          |              |
|--------------------------|--------------|
| ԵԳԻՊՏՈՍ                  |              |
| ՂՐԵ ՈՂՋ                  |              |
| Գանիբէի համար            | սարեկան 50   |
| » » »                    | վեցամսեայ 30 |
| Շրջակայից »              | սարեկան 60   |
| » » »                    | վեցամսեայ 35 |
| ԱՐՏԱՍԱՂՄԱՆԻ ՀԱՍԱՐ        |              |
| Տարեկան . . . . .        | Ֆրանկ 18     |
| վեցամսեայ . . . . .      | » 10         |
| ՌՈՒՍԻԱՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՍԱՐ |              |
| Տարեկան . . . . .        | րուբլի 7     |
| վեցամսեայ . . . . .      | » 4          |
| ՐԱՆԱՆՈՐԴԱԳՐԵԸ ԿԱՆՈՒԿ Է   |              |
| ԵՒ ԲՂԵՍՏԱՆԻ ՇԱՐԱԹԸ       |              |
| Թերթին վարչութեան վրայ է |              |

ՇԱՐԱԹ ՓԵՏՐՎԱՐ 17/2 ՄԱՐՏ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 70

## ԱԶԳ

Եզրկատար Արտասահմանի և կովկասի արգոյ բաժանորդներն անսնր որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդագրիները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել:

Եզրկատար բաժանորդները կրնան Մանտա-Քոթով ուղարկել իրենց բաժանորդագրիները: Թերթի վերելը նշանակուած հասցէին:

## ՄԵՐԺԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ

«ԼՈՐՏ ԲՐՕՒՐ» իր յարգանքները կը մատուցանէ Հայ Աղքատախնամ ընկերութեանց յանձնաժողովին:

Սուգի պատճառով, ստիպուած է յանձնաժողովի տրամադրութեամբ սակ դնել իրեն զրկուած տոմսերը:

Թարգմանութիւնն է այս Անգլիոյ Ներկայացուցչին զրկուած նամակին որուն պահարանին մէջ սպորդեցուցած էր նաև չորս անգլիական սուկի:

«Պ. Ասենուպետ»

Կը ցաւիմ որ չպիտի կրնամ անձամբ ներկայ գտնուիլ Չորեքշաբթի գիշեր՝ Խտի-փական Թատրոնին մէջ Հայ Բարեգործական ընկերութեանց ի նպաստ տրուած ներկայացման: Փափաքեով սակայն մասնակցիլ ձեր մարդասիրական գործին, ներփակ ձեզ կը զրկեմ 50 ֆրանքի չէք մը ինծի զրկուած տոմսերուն հետ:

Ընդունեցէք, Տիար, լուսադէպ զգացմանցս հաստատին:

ԳՕԿՈՐՏԱՆ

«Տիար Ասենուպետ»,  
Կը ցաւիմ որ սուգի պատճառաւ չ'պիտի կրնամ օգտուիլ ինծի զրկուած օթեակի տոմսակէն, որ բարեհաճած էիք ինձ զրկել Հայ Բարեգործական երկայթիւն համար:

Բայց կը խնդրեմ ընդունիք երկու հարիւր դրուշի չէք մը ի նպաստ ձեր ընկերութեան: Հասցէեք ընդունիլ, Տիար, խորին սկսածանացս հաստատին:

Ռ. ԹԱԼՊՕԹ

Ընդհ. հրամանատար գրուիլ բանակին:  
Ելմտական նախարարը սուկի մը զրկելով, հետեւեալը կը գրէ իր այցաբարտին վրայ.

«ՄԱԶՈՒՄ ՓԱՇՄ կը ցաւի որ Հայ Բարեգործական ընկերութեանց կողմէ իրեն զրկուած օթեակի տոմսակը չ'պիտի կրնայ ընդունիլ, բայց այդ բարեկատուի ձեռնարկին համար կը զրկել իր լուման»:

Ահաւաստիկ պատճէնը քանի մը նամակներու որոնց բնազիրը ինծի զրկել խնդրած էի՝ 27ի երեկոյթը կազմակերպող յանձնաժողովէն:

Նպատակս ապահովագրելու ձեզի ցուցունել չէ ո՛չ Լօրտ Բրօւրի և ոչ ալ Պարոն Բօկօրատանի ոճը և կամ գրելու եղանակը, զիտատրութիւն ալ չունիմ՝ Օլէնտորֆի գրութեամբ, «Նոր-Օր»ի ընթերցողներուն տալ նամակագրութեան դաս մը . . . կ'ընտանգներով համեմուած:

Գիւանագիտական շրջանակէն դուրս ելլելով, անշուշտ պիտի ներուի ինծի մէջ բերել հոս քաղաքիս ծանօթ փաստարաններէն Պ. Քարթան տը Վիարի նամակը:

«Պարոն Ասենուպետ»,  
Կը ցաւիմ որ այս տարի ետ դարձնելու ստիպուած եմ ինծի վերադառնուած օթեակին տոմսակը որ այս վայրկեանս կ'ստանամ, այսինքն ճիշդ՝ ուրիշ բարեգործական ընկերութեան մը երկայթիւն համար առած պէյնուարէն բանը չորս ժամ ետը:

Ինծի համար երջանկութիւն մըն է մասնակցիլ մարդասիրական գործերու, ուստի կը ինչպէս պէյնուարէն մը յատկացնէք ինծի եկող տարի . . . եթէ երբէք Աստուած զիս ողջ պահէ մինչև այն առն:

Հասցէեք ընդունիլ, Տիար Ասենուպետ, ձեր գործին յաջողութեան համար Ըրած մաղթանքներուս հետ միասին, խորին սկսածանացս հաստատիլը:

Գարթան տը Վիար

Եւրոպացիներու այս համակիր ըզգացումները և քաջալերական խօսքերը կրկին արժէք մը կունենան մեր աչքին երբ կը տեսնենք խել մը հայեր որ այնքան կոշտ կերպով կը մերժեն բարեգործական գործի մը մասնակցելու համար իրենց եղած մէկ հրաւերը:

Շատեր գիտեմ և մտէն կը ճանչնամ ուրիշներ որ Սէն-Պէտրարտանի մը յատուկ հոտառութեամբ կը կռահեն պահարանի մը պարունակութիւնը և զայն բերողին դառնալով

— Դօ՛, հազար անգամ չեմ ըսած քիտատանի քեարքոյի մեծքոյի պիլէթներ չի բերէք հոս: Ես տալու տեղը գիտեմ, կը պուան բարձրաձայն:

Բնակարանաբար ամեն մարդէ կտրել չէ պահանջել որ գթառատ սիրտ մը ունենայ և քսակը տրամադրելի ընէ զիմացը ելլող ամեն բարեգործական ընկերութեանց համար, բայց

քաղաքավար ըլլալը պարտականութիւն մընէ որմէ մարդ չի կրնար խոյս տալ՝ պայմանով որ կշտամբանքէ չի վախնայ և բամբասանքի ենթարկուիլէ չի քաշուի:

Չորեքշաբթի գիշերուան ներկայացումը կազմակերպող յանձնաժողովին սեղանին վրայ անայ շատ մը պահարաններ որ ետ դարձուած էին հայերու կողմէն որոնք, իրենց զբոհուած տոմսերը մերժելով հանդերձ, զոնէ երկայթիւն մը ցաւի և կամ համակրանքի բառ մը խել չէին զրկած, մասամբ մը արդարացնելու համար զոնէ իրենց մերժումը:

Պարզագէտ պահարանը պատուած և ետ դարձուցած էին զայն բերողին ձեռքով թերևս քանի մը ողբ քանակ ալ արտասանելով յանձնաժողովին նկատմամբ:

Այս չէ սակայն կենցաղագէտ և քաղաքավար ըլլալուն եղանակը, ո՛հ ո՛չ:

Կը հասկնամ որ մարդս, այս կամ այն պատճառին համար, կրնայ մերժել իրեն եղած բարեգործական հրաւեր մը. բայց որիէ կերպով չի կըրնար արդարանալ եթէ քաղաքավարութեան օրէնքները չի յարգեր և կը վարուի, այդպիսի յանձնաժողովներու հանդէպ, իբրև յեռկնը մարդերուն:

Բարեգործական հանդէսի մը կազմակերպութեան համար ընտրուած յանձնաժողովի մը անդամները, ընկերական սանդուխին որ ստիճանին ալ պատկանին, իրաւունք ունին իրենց նկատմամբ եթէ ոչ համակիր բայց զոնէ բարեկիրթ զգացումներ տեսնելու:

Ասոնք անհասներ են որ ընդհանուրին համար կաշխատին, զժբալզ գովելուններ, ցաւեր ամոքելու համար իրենց ժամանակը չեն ինայեր, շաբաթներով կը յողմին, և այս ամենուն փոխարէն, շատ պահանջկոտ չեն սեպուիլ կարծեմ, երբ կը բաւակառանան իրենց ձեռնարկին համար արտայայտուած ընդհանուր համակրանքէն:

Որքան որ ցաւալի է հատուտել թէ 27ի երեկոյթին յաջողութիւնը մեծաւ մասամբ ստարականներու կը պարտինք քան մերայնոց, սակայն

եթէ բան մը կայ որ ալ աւելի ցաւալի է այն ալ տմարդի եղանակն է որով խել մը հայեր ետ դարձուցին որբերու ի նպաստ տրուած երեկոյթին տոմսակները:

Եթէ այդ տոմսակները չենք կըրնար և կամ չենք ուզեր ընդունիլ, բայց զոնէ մերժելու եղանակը զիտանաք: Ասոր համար գրամ պէտք չէ:

Յ. ԱԼՓԻՄ

## Ք Ա Ք Ե

Ինչպէս քեզի չը ճանչցայ երկտասարդ օրերուս:  
Պարփակէի պիտի քեզ սիրոյ մը մէջ երազող:  
Կը վերածնի ամէն բան — զարուծ, արև, սիրոյ յոյս:  
Ինչո՞ւ տարիքը մերին վերածնիլ չէ կարող:  
Ինչպէս քեզի չը ճանչցայ երկտասարդ օրերուս:

Ինչպէս քեզի չը զբոսայ արանետի մը անդիմ:  
Ամէն մարդէ անտեսուած ճամբու մը մէջ միմակուկ:  
Քաներուս մէջ քեզ պիտի ես տամէի մեղմագին՝  
Շրթունքս յեզ ճակատիդ, ձեռքս ծաղիկ առլըցուկ:  
Ինչպէս քեզի չը զբոսայ արանետի մը անդիմ:

Ինչպէս քեզի չի տըլի էն լաւ օրերն իմ կեանքին,  
Երբեմնակամ բերկրանքիս փխրուծ ոսկին կենտուեակ  
Ինչ որ ալըլի երազին ու կանառուած տարփանքին:  
Խորամասուլաս բուրմի պէս էր չըրք քեզ պատարագ:  
Ինչպէս քեզի չը տըլի էն լաւ օրերն իմ կեանքին:

ԱՌՄԱՆ ՍԻՂՎԵՍԻՐ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ծայրագոյն արեւելի այս հրատապ խնդիրը որ ամիսներէ ՚ի վեր այնքան աղուկ յարոյց տեղեկարական մամուլին մէջ և այնքան զբաղեցուց մտքերը թէ Եւրոպա և թէ այլուր, կսկսի կամայ կամաց չունենալ այն կարեւորութիւնը որ շատեր կուտային անոր:

Հարուստ երևակայութեան սէր գլուխներ, զիտանագիտական խաղերէ և դարձուածներէ՝ համ անող մար-

զիկ, թերթի մը մէջ՝ յապտական լուրերու մասը միայն փնտաւորներ, սրճարաններու անկիւնները փակցուած «Ֆարակալ»-ի ապուշ էջերուն սուջի հիացումէ բար կարած միտմիտներ, յատկապէս ըլլալու վրայ են և սրտարմանի պէս բաներ մը կզգան այս օր երբ վարակելի Մարաշախտի ընդհանուր հրամանատար կարգուած օրէն 'իվ'ը, թմբակները ուղուածին շտի շին պոլիթիք, բուսականաշտի արին չի թափուիլ պատերազմի գաշտին վրայ և բանակցութիւնները խառնաշփոթ վիճակի մը չեն յանդիւր Ասիոյ այդ ժողովրդը:

Երբ մեծ Տէրութիւնները խմբովին կզգուշանան շատ պահանջկատ բլլալէ, պահանջաբայ և որ, այլ ևս կըզգան թէ վարակելի ծրարները պարզապէս պլլլլլլներ են որ միշտ չեն յաջողիր, ինչպէս Քալէթի մէջ:

Իրան թէ գահակից Տէրութիւնները շատ մը գիմուսներէ և ինք մը ըսպանաւորներէ ետք վերջապէս ձեռք անցուցին կայսեր կողմէ հրովարտակ մը սրով պատժոյ և նիւթարկութիւն այն աննն Չինացի պաշտօնատարները սրտը յանցաւոր ձանձրուած են վերջին հակաբրիտանական շարժումին մէջ:

Նոյն իսկ վարկիսան մը ներքին ըլլար հաւատալ թէ այդ պատիժները պիտի գործադրուին, սակայն ասոր ալ պէտք չէ առ այն կարեւորութիւնը որ քանի մը Տէրութիւններ գտնել կը կարծեն այն պատժարտչութեան մէջ, քանի որ թուան իշխանը որ այդ շարքերը կազմակերպեց, ինք՝ աղատ կը մնայ և չի զլլատուիր իր արբանեակներուն պէս:

Քանի մը անհամար կըլլատուեալ չէ որ զոհարար՝ պիտի տրուեր անշուշտ մեծ Պետութիւններու պահանջին և բնականաբար այսպիսի յիմար արդիւնք մը ձեռք անցնելու համար:

չէր որ Եւրոպական Տէրութիւնները աչքսն գրած և այգրան արին վառնեցին:

Այսօր Եւրոպայի մէջ նոտիկին սցեւորութիւնը գտնել կարելի չէ քանի որ անհիմն խանգարումներն մը ասկէ աւելի չէր կրնար տեսիլ:

Պերմանիոյ մէջ իսկ հասկացան թէ իրաց այս վիճակը այլ ևս չարունակել կարելի չէր և հանրային կարծիքը վերջապէս տեսաւ թէ կառավարութիւնը անել ճամբու մը մէջ կը զբոնուի:

Սուրբ նոտած փորձառութիւնէ մը ետքը և հակառակ վարակելի նոր արշաւանքի մը ծրարիւն, Պերմանիոյը զգուշարար շարժել արշաւատուած են վախճալով որ իրենք ալ ատանկ պզտիկ կուտիլլաներու մէջ գտնուելով ստիպուին մինչև վերջին իրիւր ապրին մէջ ինչպէս Անգլիացիք ի Հարաւային Ասիոյի:

Սմեն մարդ կը հարցնէ թէ այս զեպքերուն վերջը ինչ պիտի ըլլայ իրաւ է թէ մէկ երկու Պէտութիւններ տեսակ մը շահ կը գտնեն Չինական գործերու մէջ, բայց ընդհանրապէս բոլոր միտ Պետութիւններու համար կործանիչ ուղղութիւն մըն է այդ որմէ խոյս առլու ժամանակը եկած կը համարեն և այդպէս ալ կը շարժին:

Այս հիման վրայ այլ ևս պէտք չէ սպասել թէ Չինական ինդիքը կարելի պիտի ըլլայ լուծել ի մտայ:

Թիւրքոյը կարծեցինք թէ Մարաշայի Արեւելի ինդիքն էր որ վերջապէս պիտի կարգադրուեր բայց, աւագ, մեր միտ Արեւելեան ինդիքոյն պէս, դեռ շատ ժամանակի կարօտ ենք զոհարարելու երբ մը համարու համար:

Եւրոպական Տէրութիւնները շատ ուշ զղջացած են ժամանակին Ռուսիոյ և Միտցեալ-Նախանգներու թէ:

բինի առումէն ետքը՝ իրենց առում խրատներուն ահանջ չի կտեսնուան համար, հեռուաշար Չինաստանի ինդիքն ալ կէս մը փակուած համարելու է և ասով շահագուշակները շատ շատ «Ֆարակալ» ի մէջ պիտի կրնան գոհարար՝ գտնել իրենց ապրանքներ երեւակայութեան:

**ՉՈՐԵՔԱՐԹԻ ԳԻՃՅՈՒՄԱՆ ԵՐԿՈՅԹԸ**

Ինչպէս արլե գուշակած կինը, Չարքշարթի զիշերտ ան երեկոյթը մեծ յաջողութիւն մը ելաւ նիւթական և արուեստագիտական կրկին տեսակետով:

Այդ Բարեկրօնական հանդէսը կազմակերպող յանձնարարները հրատարակելով ինչպէս և իշխանութիւնը, զի անպիտան մարմին շատեր, սեփականութեան աշխարհին պատկանող բոլոր անձնատուութիւններ և սկանաւոր երազացիներ ու տեղացիներ փախացած կին ներկայ գտնուի թաւերական ներկայացան:

Օձիակներու թաշարատ եղբայրն վրայ յենող զեպարի կիներու աչքերն արձակուած ձանձուք, խառն ելով գոհարներու և ազամանդներու սփռած ցլլլլլ, կեկտրակաութեան հետ կը մրցին սրտեղու համար թաւորուն ահազլ որ պիտի ստանան մը կընծայեր ներս մտնողին անարկիւններուն:

Վարք՝ սրահին մէջ, այժմ բայց զեպեցիկ ստին պատկանողներուն զոյնզոյն արգուգարը ճարտիտ պարտիկ մը վերածած կին զայն, պարտեղ մը որ շատ պարտեք ելաւ . . . որբերուն համար:

Փարեպեան մեծ գերատնտէ՛ին, Ժանն Հապտիկ, իր անձնան ապագային ամբողջ թափովը հիմնալի կերպով կատարեց Բեհնէսի սք Պարսիսի պերը և բանիցս ծրարարութիւններու արեւմտացս:

Ներկայացաւ մը անձնորդական կերպով վերջացու գուշակով մը «Արեւելքեր» ինչպէս որ կը խօսին՝ որ մէկ ծայրէն միւսը խնդացնել առաւ ներկայները:

Այդ երեկոյթին զո ա հասցիքը 200 սո:

կի մտ կը հաշուար, մկանց անկող 20 սկիի գումարը զոր Ն. Բ. Խալիքը, յանձնարարովին զիմն մին ի պատասխան իր սենեկագաններն մկան միջոցաւ զբ՛ւած Արգային աւանդարարներ այդ Բարեկրօնական երեկոյթը կազմակերպողներուն յանձնուելու խնդրանք:

Շատերու կողմ արտայայտուած զարգաւարի մը համեմատ, Տիւրքի Նուպար փաշայի նախահանութեամբ արուած պարահանաւուն ի վեր, երէք հայ Բարեկրօնական հանդէս մը այսօրն յաջողութիւն չի զբտած, պարագայ մը որուն համար կը շքնորհա սրներ յանձնարարովին անպատեքը մասնաորակէ Տիարքիւրարը Արա. արմ. Լին Բամպարեան, Խաչիկ Պարպրեան և Աւարիկ փախագան (\*):

**ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐԿԵՆ**

ԱՐՁԱՆԱԿԱՆ ՆՐՈՒՄ

Արդիոյ Էտուար Է. Թագա սրին արբաշական երգս մին մէջ զոր արտաստանեց իր գոհարակալութեան օրն իսկ, կ'երկայ թէ կախովիկութեան զէմ անպատշաճ խօսքեր արտաստեսած են, այնպէս որ Պ. Վիլիէմ Թեալման իորհրդարանին մէջ խոյր յարօցած է և պահանջած է որ այդ երգս մի բանահան վերցն ին ակապ սոյս և կըսուպաշ բառերը որմնցնով սրահուած է կատարելութեամբ: Պ. Պարքար այդ մասին յայտարարած է թէ որքան որ իրենք սքանչալու մը չէ այդ մակդիրներու վրայ, սակայն տարկած է թէ առ այժմ ժամանակը չէ այդ խնդրով զբարկելու:

(\* Մեր պատուական պաշտօնակիցը Բարեկրօն արեւելք իր հինգ շարթի օրուամ թուոյն մէջ այդ երեկոյթիմ վրայ իրօտելով, սխալմամբ և կամ՝ բարեկամական փութիւտութեան մը մղուած՝ Տիար Աւարիկ փախագանին անուիք յիշած է իրբն մրակ կազմակերպիչը և անոր վերագրած է անպիտան ամբողջ յաջողութիւնը:

Աւանց անգիտանալ, Տիար Աւարիկ փախագանին կատարած գործօն դերը, շատ կողմնակալութիւն պիտի ըլլար մեր կողմէ եթէ Բարեկրօն արեւելք այս թիւնը իմացութիւնը չուղղէինք յիշատակելով մեր այս քրոնիկին մէջ յանձնարարով միւս անգամներու անուաններն ալ:

**ԱՁԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՍՅՈՑ**

(Շաա. նախորդ թիւէն)

Գ. Կրօնական գործոց անշուշտութիւնը՝ կրօնական ժողովն, բարարական գործոց անշուշտութիւնը՝ Բարարական ժողովոյն, և խառն գործոց անշուշտութիւնն ալ՝ յիշուլ երկու ժողովներուն ձեկիտը գարտը կազմուած խառն ժողովոյն վարարներու ըլլալ:

Գ. Կրօնական և Բարարական ժողովները իրենց ձեանհատութեան շքանակին մէջ գտնուած թէ՛ Ե՛կեղեցիաց ժողովուրդներուն (Թաղականներուն) և թէ՛ Ե՛կեղեցիաց, Դրարատանց, հիւանդանոցաց, վանքից և ասանց նման ուրիշ տեղեաց ազգային գործերուն ամենն ալ Տեսուչ և Թաղական խորհուրդներու միջնորդութեամբ անօրին:

Ե. Վարչութեան կեդրոնը Ազգային Պատրիարքարանն ըլլալ:

Պատրիարքը՝ իրբն պաշտօնական Գլուխ Պատրիարքարանի, թ՛ Ընդհանուր ժողովոյն և թ՛ Ազգային կրկին ժողովներուն նախագահութիւնն է. և Ազգին ուղղակի կամ անուղղակի վերաբերեալ ամեն գործերը անօ:

րին՝ ընդ վերառեալութեամբ Ընդհանուր ժողովոյ:

Զ. Գաւառական ժողովրդաց Վարչութիւնը կեդրոնական վարչութեան հետ կապուած ըլլալ, և գաւառներուն մէջ Առաջորդները նախագահութիւն ընեն տեղական ժողովներուն, որոնք պիտի կարգադրուին բաւարարականութեանց կառավարողաց Ժողովոց, և նոյն (տեղական) Ժողովոց գործերն ալ անօրինեն:

Է. Գաւառական ժողովները՝ կեդրոնական վարչութեան, և այն վարչութեան խորհուրդներուն ամեն մէկը՝ որ ժողովոյ վերաբերի նոյն ժողովոյն, և Ազգային ժողովները՝ Ընդհանուր ժողովոյն, և Պատրիարքը մէկ կողմէն կայսերական Տէրութեան, և միւս կողմէն (Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան:

Ը. Ե. որովհետեւ կայսերական Տէրութիւնը Հայոց Ազգին համար ապու հրամաններուն գործադրութեան բնական միջնորդ և Ազգային վարչութեան գլուխ Պատրիարքը կը ձանջայ և անոր կ'ուզի իր հարցումները, և թէ Տէրութիւնը Պատրիարքին հրամայել որ հարցուցած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ, Պատրիարքը՝ իր նախագահութեամբը զործող Ժողովներուն որոշման համեմատ շար:

մի. Խոկ ե՛թէ Ազգին կարկիքն անուիքով Տէրութեան հարցուլը հրամայել, այն ժամանակ Պատրիարքը Ընդհանուր ժողով հրատարակելու և այն Ժողովոյն վերջական որոշմանը յայտնել Տէրութեան:

Թ. Ազգային վարչութիւնը երեք տեսակի պարատարութիւն ունի. որոց առաջինն է առ կայսերական Տէրութիւն, այն է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, և Ազգին թէ՛ ընդհանրապէս և թէ՛ ի մասնաւոր ամեն մէկ անհամարան իրանոց և արանութեանց՝ Տէրութեան կողմէն պահպանութիւնը ապահովելու, երկրորդն է առ Ազգը, որ է ճշմարտապէս զբնութեամբ և հայրաբար վարելու: Եւ երրորդն է առ Ամոռ Էջմիածին, այն է՝ Հայաստանեաց Եկեղեցիոց կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ:

Ահա՛ ասոնք են Սահմանադրութեան այն կէտերը զոր խառն Յանձնաժողովը պատշաճ կը գտու. և զոր կը հաստատու միտ Յանձնադատովը, որ Չեր Վսեմութեան հրամանին համեմատ՝ ի զիմաց Ազգին Սահմանադրութեան վրայ իր զիտարարները Բարձրագոյն Դրան ներկայացնելու համար կազմուեցաւ:

Ի կ. Պօլիս 16 փետրվար 1862. Ասորագրութիւն Արքայի Բարձրագոյն զրան Յանձնաժողովոյ

Ստեփանոս Եպիսկոպոս Նիկիոսիոց, Տիարական Պատրիարքական Աթոռոյ կօտանդուպարոյ:

Թօհաննէս Վարդ. կապուտիկեան:

Թօհաննէս Քչոյ. փախագան Խոսկիւտար

Ս. Խաչ Եկեղեցիոց

Թօհաննէս Քչոյ. Հիւրերարկէլեոսիկեան

Ս. Հրեշտակապետ Եկեղեցիոց ի Պարատ:

Կերպ Երամեան.

Մերովիկ Վիշեան.

Յակոբ Մուպահէտեան.

Թօհաննէս Երեւակարեան.

Յովաննէս Տաւեան.

Գրիգոր Ազգած.

Յակարիկ Երատանկեան.

Գապար Կիւմի շնի:

Արքայի Ազգային Յանձնաժողովոյ:

Արքածեան Մկրտիչ.

Արանեան Ստեփան.

Մանուկեան Մանուկ.

Միւստեան Միւստ.

Ռուսիկեան.

Մերեանեան Թօհաննէս.

Օտեան Գրիգոր:

(Շարունակելի)

Այս յայտարարութեան վրայ Պ. Ռեյսը մինչև պատասխան տալ և թէ որքան որ այդ անպատշաճութիւնը վերջանայ չի վերցուիր ինքը չպիտի մտնուի թագաւորին աստիճանը...

ԹՈՒՄԻԱՆ ԽՈՒՑՆԵՐԻ ԿԱՄԱՐ

Ռեյսի այս անպատշաճ վարմանը զրկելու և Լուսաւոր Է. Բ. գահաձառքը սրան մէջ լաւութիւն պահուած է Գերմանիայ կայսեր Անգլիայ տրուած երկար այցելութեան մասին:

Մեծ գիւտնաբեր մը հետեւել կերպով կը բացատրէ այդ լաւութիւնը:

—Անգլիա կողմէն այս, կըսէ նա, պաշտօնաւոր մէջ տեղ հանել Անկո-Գերմանիայի համաձայնութեան մը գոյութիւնը, պարզապէս այդ համաձայնութեան վրայ Ռեյսի սեղանաւորութիւնը վրիպել ապու համար:

Անգլիայ այժմէս քաղաքականութիւնը Ռեյսի հետ համարադրուած գործիւն կերպարանքը անկողնէ մէջ կը կայանայ, բայց անգամ մը, Թրանսիլիանի պատերազմը վերջանալուն պէս, պիտի տեսնենք թէ Անգլիացիները Գերմանիան հետ միացած Ռեյսի վրէժ պիտի կանգնին Չինական ինքիներուն մէջ:

ՅԱՆՏԱՆՈՐ ՊԱՇՏՈՆԱՆԵՐԸ

Կարգէր օր Բորսնի Բեքնի ստացած մէկ հեռագրին համաձայն փետրվոր 20ին Չինական կայսրը վերջապէս ստորագրած է վաւերացած է յանցարար պաշտօնատարներուն այն ցանկը զոր օտար տերութեանց դեպքերին զերկայացուցած էին իրեն: Կայսրական այս հրահրարանին մէջ նշանակուած է սահմանուած են այն պատիւները որ պիտի տրուին յանցարար պաշտօնատարներուն: Ասանկ մեծաւ մասամբ պիտի գրաւուին: Կայսրը միակ բացառութիւն մը ստացած է ընդ Շու-Շաօի և Ենկի-Շիենի սրունք փոխանակ զիւրաքանակ, կտրուան պիտի կլեն:

ՇԱՐ-ՊՈՒՐԿԵՐԻ ՄԵ՛՞՞ ՇԱՌԸ

Հանդիպարիկ ստացուած հեռագրի մը կըսէ թէ, Թրանսիլիանի փոխ-նախագահ Պ. Շաք-Պարիկը բանտի ստանալու մը մէջ պարզապէս յայտարարած է թէ այլևս որևէ յայտ, որ Գերմանիա պատին յաջողութեան վրայ և այլևս ունենայ և պատերազմը երկարել թէ և ինչը Պերսիան չի իրատես զինաթափ ըլլալ բայց եթէ պարագաները ստիպեն վերջապէս ընդունիլ իրաց այդ վիճակը, լաւագոյն բանը որ մեզ կը թայ, կըսէ Պ. Պարիկը, այնալ ամենքս մեկտել, իբրև մէկ ազգ, անձնատար ըլլալն է:

ՊԱՏՆՈՒՄԻ ԿԱՇՏԵՆ

Անգլիայ պատերազմական նախարարութեան ստացած հեռագրիները կը թանուցանեն թէ Սիբից Տորին գործարարը 2000 զինուորով գերի բռնուած է Պոժանի կողմէն:

ԱՆԳԼԻԱՅԱՆ ԱՐՁԱՆԵՐԸ

Կերտայ թէ Լուսաւոր Է. Նախագահութիւն պիտի ընձայ Արեւմտեան Կայսրութեան փոխանակ Օպարիկը որ հանգուցեալ թագաւորին սիրական պալատին էր: Պատերազման նախարարութեան կողմէ բարձրաստիճան սպայի մը պաշտօն տրուած է զինուորական մը և շայն մը կառուցանել տալ պարատան մտակերը:

ՆՈՐ ՄԱՐՏԱՆԱՐ ՄԸ

Եսր-Սի-Թայի նա ավարտուն առաջի կարի նոր մարտանաւ մը ծով իջեցուցուած է փետրվոր 20ին:

Այդ նոր գահաձառքին անուն է «Ռեյսը» 44,000 տակտայի տարալուծիւն և իր մեքենաները 18,000 ձիւ գործարարներն:

ԻՏԱԼԻԱՅ ԹԱԳԱՆՈՐԸ

Իտալիայ մէջ վերջերս կատարուած մարգահամարի միջոցին, Վիլիամ Էմանուէլ թագաւորը, իբրև պարզ քաղաքացի իր իսկութիւնը հաստատող հետեւեալ ծանօթագրքը գրեցած է մարգահամարի վարչութեան: Անուն և Մականուն — Վիլիամ Էմանուէլ աք Սափա, որի հանգուցեալ Ռեյսը թագաւորին:

Ռնակութիւն — Հոռո:  
Մննդնան քուակաւն — 1869 Նոյեմ.  
Մննդանդի — Նախօրի.  
Անունսնցեալ — Այս.  
Գրեց կարգալ — Գիտ.  
Կրօն — Կաթոլիկ.

Անոր ի կարգաւորներ — Հոգի և գործարարներ:

Պաշտօն — Իտալիայ թագաւոր:

Այս առթիւ իտալական թերթերը կը յիշեցնեն թէ արդի թագաւորին մեծ հայրը Վիլիամ-Էմանուէլ Բ. մարգահամարի յաւանակ ծանօթագրքին մէջ իր ձեռքով հետեւեալը գրած է Պաշտօն բառին առջև:

— Թագաւոր Իտալիայ և . . . հոգաբարձ:

ՍԵԼՏԵՐԻ ՀԱՐԲԵՐԸ

« Բըլլու տէ րըլլու » ֆրանսական թերթը իր վերջին թիւերէն միտն մէջ « Սելտերի հարեմ »-ը վերնագրին տակ յօդուած մը հրատարակելով, կը նկարագրէ Սոլիմանի հարեմներուն ստացած կրթութիւնը ստպէս:

« Այդ հիւանդի գրախօսին մէջ, կը ըսէ յօդուածագիրը, Սոլիմանի համար յատկապէս բերել տրուած են վրաստանի էն գեղեցիկ և էն շնորհալի Ձէրքեղուհիները: Ասանկ Սոլիմանի կանանցը մտած օրէն սկսեալ կը յանձնուին վայրէջ Սոլիմանի իւր նամուցը: Վայրէջ Սոլիմանը նախ և առաջ ասանց կը ուրեցնէ քաղաք, խօսելու, խոստումներ ընելու եղանակները իւր-իւր նշխարին իրենց յատուկ ամենանորը վայելութիւններով:

Երբ երիտասարդ Ձէրքեղուհին իր ստան զատերուն մէջ բաւական յառաջադիմութիւն ընէ, այն ատեն վայրէջ Սոլիմանը իրեն կը սովորեցնէ մասնաւորապէս Սոլիմանին առջև ծառայելու կերպերը: Թէ թէլը և կամ սորբը ինչպէս պիտի հրամայեն, մուծակը ինչպէս պիտի գնէ վեհափոփութիւն սուրբուն առջև: Սոլիմանը ինչ բանէ կախարծի, և ինչ բանը կ'ատեն, ասանց ամենքն ալ Ձէրքեղուհիին աւանջը կը ընեն:

Երկու տարի շարունակ նորիկ Ձէրքեղուհին կրթութեան և քաղաքավարութեան դասեր կը աւարտին Վալիատէ Սոլիմանի կողմէն: Երկու տարին իրանուէն վերջը Ձէրքեղուհին քննութիւն կ'անցունէ Վալիատէ Սոլիմանի նախագահութեան վրէժով կազմուած ժողովի մը առջև, և եթէ յաջող կլեն, վկայական մը կ'ստանայ:

Երկու տարի առաջուան Ձէրքեղուհին չէ այլ ևս նա: Հրատարակչ Նայտոմը:

նէր, վայելչաւ մտ. ձեւեր, շնորհով նստուածքներ, սիրուն և գեղեցիկ նիւսարայ սրտախօսութիւններ, և կան շայն գր. ներու գեղեցիկութեամբ շքեղ այդ հակին մէջ: Այս ան ձէրքեղուհի օտարուած Ձէրքեղուհիին կողմէն ընէ կը մնայ, այն ալ շտիպուած ըլլալ: Երբ որ շափահտու կ'ըլլայ, կը գրուի հարեմներուն կարգին մէջ, և գ. մ. ալ եթէ բազմ ունի, իր վեհափառ արքայը այցելութեանը միջոցի, կը զարնէ աչքին, ու անմիջապէս համանկուցայ որ Ձէրքեղուհին մտնէ սուրգատի սենեակը վայելչու համար Սոլիմանին հետ մեղաբարձութիւն ժամեր:

ԱՆՏԱՆՈՐ ՖՐԱՆՍ

Միտանուն հայաւեր Պ. Անաթոլ Ֆրանս որ ամիսէ մը աւելի Գահիրէի մէջ տեսնելու բազմ ունեցանք, երկուշաբթի օր Բոս-Սոլիմանի ճամբով ուղղեղեցաւ Երուսաղէմ ուրիշ շիտակ Ֆրանսա պիտի վերադառնայ:

ՀՈՍԿԵ ՀՈՆԿԵ

ՌՈՒՍ ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Ռուս կիները խառնակեցութեան պաշտպանելու և անոնց բարոյականը զօրացնելու համար, Բեդերսպուլի մէջ նոր ընկերութիւն մը կազմուեցաւ նախագահութեամբ Օլաէնպուրիի Իշխանուհոյն: Ընկերութեան առաջին նիստը տեղի ունեցաւ իշխանուհոյն ապարանքին մէջ, և վարիչ Թերա-կոյին անդամներէն խօսի՝ նիստը բացաւ յոյժ շահեկան բանախօսութեամբ մը խառնակեցութեան վրայ: Բեդերսպուրիի բարձրագոյն ընկերութեան վերաբերող 300է աւելի ուն. կընդիւրջ յազմամբ մտիկ ըրին այս ընկերային շարքին պատմութեան: Ահա՛ համառօտութիւնը գիտնական ընկերաբանին արտասանած ծառին, խառնակեցութիւնը, այսինքն մարդկային մարմնայն վաճառուը, իբրև մասնաւոր արհեստ մը կ'իբրիկ մարդկային պատմութեան սկիզբը, և արդարև Հին կրտսերանի նահապետներ կ'արդիւն իտրայելի կանանց այդ արհեստն ի գործ գնել, ի Բարդէաստան, պատերազմամուլ և վայրենի ժողովուրդեան ծոցին մէջ գոյութիւն ունէր « հիւրնկալու » խառնակեցութիւնը: Ի Բարդիս կրօնական պաշտամունքի կարգ անցած էր, այսինքն Աստղիկի պաշտամունքը, ի պատիւ իօսի կատարուած աստերուն անն ամենաասակալի թեթեալարու յոլթիւն կ'անանուէր: Ի Յունաստան, Բրիտանոսէ վեց դար առաջ, անբարոյականութիւն այն աստիճան առաջ զացած էր որ Սլուն իբրև օրէնք հաստատեց պաշտօնական խառնակեցութիւնը: Հոռոմայեցոց մէջ կ'ըլլան նեմք « ներդաւաճութեան » տուներ և մասնաւոր օրենքներ խառնակեցութեան համար: Միջին դարն ամբողջ Եւրոպայի համար բարոյ նմանը չի

տեսնուած ապականութեան ժամանակամիջոց մը եղաւ. անկից վերջն է որ բուն հակազդեցութիւն մը սկսաւ ծայրայեղ վատթարացման գէ՛մ, և խիստ օրէնքներ գրուեցան: Գամանութիւնն այնուհետև լեցուն է սոսկալի պատիժներով որք հնարուեցան պատժելու համար մարդկային մեծ վաճառուը, այսինքն բղջիկահարութիւնը, և այս պատճառաւ միջին դարու մէջ 800 անպարկեշտ կիներ մէկ անգամուն ծովը թափուեցան: Ըսենք անցողիկ թէ այս շափահտն խիստ տնօրինութիւնն ըրաւ նոյն ժամանակ կի ամենէն վատթարացեալ մարդիկներէն մին: Արդի ժամանակաց մէջ խառնակեցութիւն իբրև շահու ազբիւր կը գտնուի ամենէն քաղաքակրթ ինչպիսի նաև ամենէն անմշակ ժողովուրդ մէջ, սա՛ տարբերութեամբ որ առաջինները փափաք կը յայտնեն մերթ ընդ մերթ շափ ու սահման գնելու խառնակեցութեան: Բայց ամեն երկիրներու մէջ վիճակագրութիւնը կը ցուցնեն թէ գաղանի խառնակեցութիւնը շատ աւելի սարածուած է բան կանոնաւոր խառնակեցութիւնը: ուրեմն օրէնքին ազդեցութիւնը շատ ազդեցիկ չէ, և կառավարութեան միջամտութիւնը շատ մեծ արժէք չունի: Գիտնական մարդոց խաղաղութեանց նայելով, խառնակեց կիներէն հարիւրին 43ը այս նոյն կալի աւստուրին անձնատուր կ'ըլլան բարոյ բնածին ապականութեամբ, իսկ հարիւրին 57ը ցաւալի և սոսկալի պարագաներու հետեւաօր կ'իյնան այս ողորմելի վեճակին մէջ: Ուրեմն գորման կ'ըլլայ այս ընկերային շարքաց. և ասոր համար ամեն երկիրներու մէջ պաշտպան ընկերութիւնը կ'կազմուին կանանց անկումն արդիւնը կամ անդին գորս հանելու այս օլձէր կիներուն, որք կեանքի տարբեր պայմաններուն մէջ, անշուշտ պարկեշտ պիտի մնան:

ԱՌՄԱՆ ՍԻԼՎԵՍԹԻ ՄԱՀԸ

Ֆրանսայի էն փալատն գրագետներէն մէկուն, Աման Սիլվեսթրի մահը կը ծանուցանեն փարիզեան թերթերը: Նորաձաշակ և որսմիտ գրագետին այս կորուստը մեծ ցաւ պիտի պատճառէ ամեն անոնց որ մասնաւոր համայնքով մը կը կարգային Երկրի ինքնակին գործերը: Իբրև բանաստեղծ, վիպագիր, թատերգակ և քրօնկագիր, Աման Սիլվեսթր, տիեզերահաճակ համբաւ մը ունէր և իր գործերը սրունց մէջ ընդուն ազգայն մը կը փայլէր, թերև ամենէն շատ կարգացածներն էին գրաւորներու աշխարհին մէջ Աման Սիլվեսթրի հեղինակութիւններուն մէջ ամենէն մեծ սեղը կը գրուեն իր գաւթաբանական և տարփային վիպակները որոնք իր ընդ գործերն աւելի թերև ծառայեցին իր հոռոմուր շինելու: Այդ վիպակներուն մէջ քրօնք ներառիտ գրականութեան մը գոհարներն են պարզապէս, այնպիսի փափուկ բնոյշ մը, բարի գուարդութիւն մը և գրեցուցիչ սէ մը կը գործածը որ ամենէն խոստապահանք բարոյաւորներն անգամ գիտնալի կ'ըլլային և կը խոստովանէին թէ Աման Սիլվեսթր վրան բայց գրականութեան մէջ անմահ վարպետ մըն էր:

Իր բանաստեղծական գործերուն մէջ նշա- նաւոր են. Նոր և և ինն Հանգերը. Վարդերու Երկերայւոյրը. Առաջերու երգը. Ասկեղեն Քեներ. Վերածնուն- քի ինները և այլն և այլն:

Կը թողա նաև թատերական բազմաթիւ հեղինակութիւններ, վեպեր և օրերայի շիւթերքո ներ որոնցմէ ամենէն ծանօթներն են, Կրիզալիսիա՝ Լե Բոգալ, Սամօ, Միրու, Տիմիթրի, Հանի և:

Փարիզեան գլխաւոր թերթերու մէջ կաշ- խասակցեր իր արտեստարնական յօդուած- ներով որոնք իրատ մեծ ախորժանօք կը կարգացնէին:

Առան Սիլվեսթր ծնունդով Բարիզցի էր և 61 տարեկան հասակին մէջ կը մեանի ՚ի թուրք:

Իրի գրագետ բարձր և նախանձնի տեղ մը գրաւել զատ, Առան Սիլվեսթր 26 տարի շարունակ կառավարական ծառայու- թեան մէջ գտնուած է, երևտական քննիչի պաշտօնով:

Տարի մը առաջ Պատուի Լեգէնի երկրորդ աստիճանը ստանաւ էր իրեն:

Մեր այս օրուան թուին մէջ. Առան Սիլվեսթրի մէկ նշանաւոր բանաստեղծու- թիւնը արտասպաճ ենք որուն թագրմանու- թիւնը կը պարտինք մեր ամենէն շատ սիր- տալ գրագետներուն մէկուն:

ՆՈՐ ՍՐՃԱՏԵԱՆ ՄԸ

Նիւ-Եօրկցի բիշօք մը Պ. Լեյնսթրի վեր- ջերս խոշոր գիրք մը հրատարակած է սուրճի գործածութեան գեղ. այդ գիրքով, Ամերիկացի բիշօքը՝ հաստատել կուզէ թէ ջրային հիւանդութիւնները սուրճի գործա- ծովներէ զատ որ և է պատճառ մը չեն կըր- նար ունենալ:

Չրպէս հիւանդութիւններէ ամենէն շատ աստագործները, կրտ նա, Գերասանները, Գրագետները, Աւտարական տուներու ճամ- բորդող պաշտօնեաները, և Սեզանաորա- կան միջնորդներն են որոնք ստիպուած են, իրենց գործին բերմամբ, շատ խոր սպա- սել և ատար համար շարաշար կերպով կը յոյնեցնեն իրենց մաստարական կարողու- թիւնը:

Սուրճ գործածողները սղելից բնօրին խմորներուն և ափսոն կամ հաշիշ ձեռնի- բուն պէս, կը յարկաւ Պ. Լեյնսթրի, ան- չպաշար օրօք կաւելցնեն իրենց խմած սուրճին բանակը: Քննութեան ենթարկուած հիւանդներուն շատերը օրը մինչև 14 թաս սուրճ կը խմեն եղեր, բարակութիւն մը որ բաւական է մարդու մը ջիւղեր սղորմիլի վիճակի մը հասցնելու համար:

Ըստ Տօք. Լեյնսթրի, շարար որ և է կերպով չի մեղմագնիւր եղիւր սուրճին ազ- ցեցութիւնը, յիսուի յոյիլի սուրճ մը այնքան փաս կը պատճառ կղեր սրբան մեծ շիլիսի ն երկու յունական սրահումներ չորս մեր սրճարաններու յոյն կառանները կը գործու- ծեն շարարով կամ անշարար սո բճերը ի- բարմէ զանազանելու համար ի հասցոյ յա- ճախորդներու բնայլին:

Կուզէր պիտաւ թէ Տօք. Լեյնսթրի սր- բան հիւանդութեանց պատճառ ըլլալու պա- տասխանատուի նը կը բեռնէ գուտմ մը սուրճին կանակին վրայ, կարողէր ուրեմն — Գլխացատիւն — Չղարգրութիւն — Ոստ գեղցին խմորս Ժ և Գրգռակամութիւն — Անբուժութիւն — Սրտի փափախում Ախոր- ժակի սրայատութիւն — Պնթութիւն — Զը- դայտում — Խեղը պտոյս և այլն:

Այս տղերը կարող են վերջը, կարծենք Բարեկարգման ընդհանրական սրճարանի յաճախորդները երախտագրաւ ըլլալու են

այդ սրճարանի վարիչներուն, որոնք հայ- բանում հոգածութեամբ մը և ազգասիրա- կան գովելի չղացումներով իրենց յաճախորդ- ներուն կը բշեն խաչովի գուտմներ որոնց բէջ ամեն բան կայ . . . սարճէ գատ :

ԿՈՒՋԷՔ ԲԱՂՂԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, որ շատ մը զուարճայի և օգտակար հատուածներու հետ կը գանուի նաև գեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գնել փափաքողք թող հաճին զիմել առ Տ. Օ՛հն Խնտաման, որ պատ- բաստ է արիշ ամէն տեսակ զրքերու մասին յանձնարարութիւնը փոխով կատարել փոքրիկ կանխավճարով մը: Երջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարա- րութեան համար զրամի տեղ թըը- թաղարձ կընդունուի:

Table with 2 columns: Item name and Price. Includes 'Տարեցոյցին գինը' (40 Դրշ) and 'Պարզ օրացոյցինը' (2 Դրշ).

Ա. Զ. Դ

Շատերու կողմէ յայտնուած փա- փաքի մը գոհացում առաւ և մեր ընթերցողներու զիս բովին մը ըն- ծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Եա- րա Ապա-ԷԼ-Ալիդի սկիզբը Պ. ԿԱՐՍ. ՊԵՏ ԵՐՁՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլխով-Պէյ փողոցի ծայրը և թը- լամպէյնիւր կայարանին մօտ ձխա- վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՍՊԵԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER  
Տպաւ. «Միութիւն».— Թ. Ս. Փարիսգետնի

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՆՈՒ ԵԳԻՊՏՈՍԻ  
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիանի հանրածանօթ գրամատուը, այս անգամ աւելցաւ իր եզրկարտի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սուսյան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամե- նուս փաստաթուղթեր կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիանի քաղա- քապետութեան պաշտօնապէս վա- յերացուած փոխանարգողի համա- ձայն, պիտի կատարէ Պանգ Լիանէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և քուէտի քանակներ, վիւլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ Սմա- կան շնչին գումարի մը խնայողու- թեամբ ձեռք կը բերուի ինչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա- հանութեամբ երաշխաւորուած:

Փափարողները հաճին զիմել Նիւ- պառի վրայ փաստարան Ռարթարիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըր- կել հետեւել հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ  
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՍՏՆԱԲՈՅԺ  
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Պահիլի, Գափէ ար ըս Պարի կից, Բ. յարկ, թիւ 9 գ. ստիկանը:

Կը բժշկէ բերնի և սկուայի ամեն տեսակ հիւանդութիւնները և Աղբա- ները ձրի կը գալանէ ամեն օր, ա- աւառան ժամը 8 և 9:

ՊԵԼԱՅԱՆ-ԹԻՃՄԱՆԿԱՆ ԸՆԿ.  
ԱՍԵՐԿԵՍ ԴԵՐԱՎԵՐ  
ԱՐԵՅ.ՆԻ ՏԻԿԱՆՅ  
ԵՒ ՉԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՈՅ

Ապիլի մեծ պոլլոսային վրայ Տալիայի Սանիլիի գիմ սցը, 6 սկիլի ելեկրակ սն գործիւն ու վան առ սուսը:

Վերջերս Ամերիկայէն հօս Էկաժ հաստատուած ըլլալով կը յայտարա- րենք արդոյ հատարակութեան լե՛ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմոյ Պատ. յաճախորդները, գործի մար- րութեան, զինքու չափաորութեան և ճշգրտահալթեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'ուան- գային նաև ձեւալիտութեան դասեր ամերիկեան ամենապիլին կատարե- լաղործուած մէթատով:

Մանրամանութեանց համար զիմել մեր գործատեղին:

ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅԿԱՎԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՅ. ԳԱԶԱՆՃԱՆ  
Ետաւ Ապրիլ-Ստպոն  
Նիւա-Տիւրուէլ զեղարանին զխոսքը:

Օրատան ու զուարճայի զիւր մա- քար ու վայելաչ սպաս համեղ ու անդարտ կերակուրներու զանազա- նութիւնն, անխարդախ պատրաստու- թիւն. ճոխ ճաշացուցակ մը զիւրա- մատչելի զինքով: ահա՛ Գաղանձ- կան եղարաց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ փորձի համար մէկ անգամ թող զիմէ, փաստ պէտք է ըլլայ լե՛ մշտակոյ յաճախորդը պիտի գաւնայ հայկական ճաշարանին:

Large decorative advertisement for 'ՏՊԱՐԱՆ' (Printery) featuring ornate borders, logos, and text. The text includes 'ՏՊԱՐԱՆ', 'Ի ԳԱՀԻՐԷ', 'ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՄՈՒԳԱԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ', 'ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ', 'ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ', and 'ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ'.